«Իրական աշխարհ, իրական մարդիկ»
սոցիալական հասարակական կազմակերպություն

«Реальный Мир, Реальные Люди»
социальная общественная организация

"Real World, Real People" social non-governmental organization

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0069, Մ. Ավետիսյան 4փ., 33 տուն
Էլ.փոստ՝ info@realwrp.com
Հեռ.՝ (+374 98) 66 33 83, (+374 94) 422 922


ուղարկող՝ info@realwrp.com
արսացող՝ marzpet.armavir@mta.gov.am

18.01.2021թ.
Թիվ 002

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

Հարգելի պարոն մարզպետ,

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ն իրականացնում է ՀՀ-ում պալիատիվ բուժօգնության և արդյունավետ ցավամոքման հասանելիությանն ուղղված ուսումնասիրություն:

Այդ առումով, անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթները՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի վերաբերյալ.

1. 01.01.2020 - 01.01.2021 թթ. ժամանակահատվածում ցավամոքման նպատակով որքա՞ն ներարկման տեսքով մորֆին է նշանակվել պացիենտներին Արմավիրի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող բուժհաստատություններում:
2. 01.01.2020 - 01.01.2021 թթ. ժամանակահատվածում ցավամոքման նպատակով քանի՞ պացիենտների է ներարկման տեսքով մորֆին նշանակվել Արմավիրի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող բուժհաստատություններում:
3. 01.01.2020 - 01.01.2021 թթ. ժամանակահատվածում ցավամոքման նպատակով որքա՞ն հեղուկ ներքին ընդունման տեսքով մորֆին /օրամորֆ/ է նշանակվել պացիենտներին Արմավիրի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող բուժհաստատություններում:
4. 01.01.2020 - 01.01.2021 թթ. ժամանակահատվածում ցավամոքման նպատակով քանի՞ պացիենտների է հեղուկ ներքին ընդունման տեսքով մորֆին /օրամորֆ/ նշանակվել Արմավիրի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող բուժհաստատություններում:

Միևնույն ժամանակ պարտավորվում եմ փաստաթղթերը ստանալու դեպքում վճարել պետական տուրքը՝ այդպիսին լինելու դեպքում նախապես տեղեկանալով դրանց չափի մասին: Անհրաժեշտության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Հարգանքով,
ՀԿ նախագահ՝ Ժ. Մայիլյան

Մուտք թիվ Ա-01091-2021
19 01 2021